

Հ Յ Ո Շ 8

ԱՐԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ Հ 8

Տ. ՍԵՆՅՈՒՇԿԻՆ

С 1926 с 1229

ԳՈՐԾԱՐԱՆԱՑԻՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ

ՅԵՎ

ՏԵՂԿՈՄՆԵՐԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ՆԵՐԿԱ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ПОСТОРОВОДЕНИЯ
Академии Наук
СССР

ՀՐԱՄԱԿԱԽՎՅՈՒՆ Հ. Ա. Ա. ԽՈՐՃՅԱՆ

1924

ՅԵՎԵԿԱՆ

331.881

Ա-40

~~N 50~~ 331.881 15 JAN 2010

ՊՐՈՎԵՍԻՈՆԱԼԻՍՏԻ ԳՐԱԴԱՐԱՆ Հ 8
Ա-40

Կ 1926 N 229
Վ 2025 Պրովեսոնալիստի գրադարանի միացեր.

ԳՈՐԾԱՐԱՎԻՆ ԿՈՄԻՏԵՆ ՀԻ
ՏԵՂԱՌՈՒՅՈՒՆՆԵՐԸ ՀՈՎՈՒ
ՅԵԿԱՌՈՒՅՈՒՆՆԵՐԸ ՀՈՎՈՒ

ՆԵՐԿԱ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Հայացակարգութեա Հ. Յ. Պ. Խովհեզի
1924
Յ Ե Ր Ե Գ Ա Կ

30 JUL 2013

25.028

ԳՈՐԾԱՎԱՆԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԿՈ-
ՄԻՏԵՆ—ՄԻՈՒԹՅՈՒՆԱԿԱՆ ՍԿԶԲՆԱ-
ԿԱՆ ՄԱՐՄԻՆՆ Ե

1. Միությունների հիմնական խնդիրը, — բանվորական լայն մասսաներին կազմակերպելն է, այդ խնդիրը կարող է լուծվել միայն ստորին միություննական աշխատանքի ամրացմամբ: Դեպի մասսաները տանող ճանապարհը ընկնում է գործարանային կոմիտեյի (տեղկոմի) վրայով և նըրան ամուս հիմքերի վրա գնելը, և դեկավարների ընտրությունը միությունների համար ունի հսկայական նշանակություն:

2. Գործարանային կոմիտեները (աեղ-
կոմիները) Ս.Խ.Հ.Մ.-յան մեջ միությունա-
կան սկզբանական մարմիններն են, միու-
թյունական բարձր մարմինների գիրեկ-
տիվները նրանք են կիրառում կյանքի մեջ
և ձեռնարկություններում միությունական



59045-66₁₉₁

ամբողջ աշխատանք տանողը նրանք են:
Գործության կոմիտեները (տեղկոմիները) իրագործում են միությունների հիմնական խնդիրը, վոր վորոշել և միությունների համառուսական Վ համագումարը 1922 թ. սեպտեմբերին, այն համագումարը շահերի պաշտպանությունն ու նրանց նյութական բարեկեցիկ գրության բարելավումը:

3. Արդեն այս խնդիրը վորոշում ե գործարանային կոմիտեների ամբողջ աշխատանքի բովանդակությունը. նրանք պաշտպանելով բանվորների նյութական շահերը, միաժամանակ հենց նույն բանվորների շահերի տեսակետից շահազգրգոված են իրենց ձեռնարկության և ժողովրդական տնտեսության հետագա զարգացումը:

4. Գործարանային կոմիտեները (տեղկոմիները), լինելով միություննական սկզբանական մարմինները, ընտրված են ձեռնարկության կամ հիմնարկության բանվորների ու ծառայողների ընդհանուր կոմ

պատգամավորական ժողովներում ձեռնարկության ըոլոր բանվորների ու ծառայողների կողմից, անկախ այն հանգամանքից, թե նրանք միության անդամ են թե վոչ. գործարանային կոմիտեներն (տեղկոմիները) ընտրվում են 6 ամիս ժամանակով, համաձայն գործող կանոնադրության:

5. Գործարկոմի (տեղկոմի) ընտրովի անդամների թիվը փորոշվում է այսպես. 50—300 բանվորներ ընտրում են 3 հոգի, 300—1000⁺ 5 հոգի, 1000—5000⁺ 7 հոգի, 5000-ից ավելին՝ 9 հոգի (Ռուսաստանում): Հայաստանում—25—50 աշխատողները ընտրում են 3 հոգուց տեղկոմ, 50—100⁺ 5 հոգի, 100-ից բարձր՝ 7 հոգի:

Գործարկոմի (տեղկոմի) կազմը հասանակում ե միության վարչությունը. գործարկոմի (տեղկոմի) անդամների թիվը, փորոշված ազատված են իրենց արհեստի աշխատանքներից՝ գործարկոմում մշտական աշխատանք տանելու համար, վորոշվում ե հետեւյալ նորմայով. 30-ից մինչև 50 բան-

վորներից աղատվում է 1 մարդ, շաբաթական 2 որից վոչ ավելի (միության լիազուրը), 50-300 բանվորից՝ 1 մարդուց վոչ ավելի՝ ամբողջ ժամանակվա համար, 300-1000 հոգուց՝ աղատվում է 2 հոգուց վոչ ավելի՝ ամբողջ ժամանակվա համար, 1000-5000 հոգուց՝ 5 հոգուց վոչ ավելի՝ ամբողջ ժամանակվա համար (Առևտաստանում):

Հայաստանում՝ մինչև 25 հոգի աշխատողներ ունեցող հիմնարկներում՝ տեղկոմի անդամներից մեկը աղատվում է շաբաթական 3 ժամ, 25-50-հոգուց՝ 6 ժամ, 50-75 հոգի աշխատողներ ունեցող հիմնարկներում՝ աղատվում է մեկը շաբաթական 3 որ, 75-300 աշխատողներ ունեցող ձեռնարկներում՝ տեղկոմի անդամներից մեկն աղատվում է իր պաշտոնից, 300-ից բարձր թիվ ունեցողներում՝ 2 յեն աղատվում:

Գործարկոմի (տեղկոմի) աղատված անդամներն վարձատրում են ձեռնարկությունը, նրանց վորակի միջին աշխատավարձի չափով, բայց վոչ պակաս նրանց տարիքային դրույթից:

Գործարկոմի (տեղկոմի) կազմակերպած

բոլոր հանձաժողովներին իրենց աշխատանքները կատարում են աշխատանքի ժամերից գուրաս:

Գործարկոմի (տեղկոմի) պահպանման ծախքերը հոգացվում են տնտեսական որգանների հաշվին, միությունական բարձր որգանների հաստատված նախահաջովակը լատ գորում մինչև 500 բանվոր ունեցող ձեռնարկություններում և հիմնարկներում՝ տնտեսական մարմնից գանձվում են ավյալ ձեռնարկության բանվորների աշխատավարձի $2^0/_{\circ}$ -ից վոչ ավելի. 500-1000 բանվոր ունեցող ձեռնարկություններում՝ $1^1/_{2}^0/_{\circ}$. 1000-3000- $1^0/_{\circ}$ 3000-ից ավելին $1^1/_{2}^0/_{0}$:

Հայաստանում, տեղկոմների աշխատանքների համար տնտեսարմիններն ու հիմնարկները տալիս են իրենց աշխատավորների աշխատավարձի $1^0/_{\circ}$ -ը, իսկ հավաքական պայմանագրեր ունեցող ձեռնարկներում՝ փոխադարձ համաձայնությամբ ($1-1^1/_{2}$ տոկոս):

Գործարկոմի, տեղկոմի և նրանց փոխարինող լիազորների պահպանման կարգը գորոշվում է Հ.Կ.Գ.Կ.-ի նախագահության

1922 թվի սդուառոս 26-ի հատուկ վորոշումով
և Աշխատանքի որհնոգրքով:

6. Գործարկումի (տեղկոմի) ապագարատը
ըստկացած և տվյալ ձեռնարկության կամ
հիմնարկության ընտրված միության ան-
դամներից, վորոնք ազատված են մշտական
կամ մի վորոշ ժամանակով աշխատանք
տանելու համար, վերևում մեջ բերած հա-
րաբերությամբ: Անհրաժեշտության դեպ-
քում, հրավիրվում են գործարկոմների մի-
ջոցներով, վոր ստացվում են վերոհիշյալ
չափով անտեսական մարմիններից, հատուկ
մարդիկ գործափարության, հաշվիտարու-
թյան և այլ աշխատանքների համար: Սա-
կայն ըստ հնարավորության անհրաժեշտ և
քիչ քանակությամբ վարձու տեխնիքական
աշխատողներ հրավիրել, աշխատելով գործ-
արկոմում(տեղկոմում)յեղած ամբողջ աշխա-
տանքը կատարել ընտրովի անդամների ու-
ժելով:

ԳՈՐԾԱՐԿՈՄՄԵՐԻ (ՏԵՂԿՈՄ-
ՄԵՐՆ) յԵԼԱԿԵՄ ՈՒՆԵՆԱԼՈՎ ԻՐԵԿԿ ՀԻՄՆՈՒԿԱՆ
ԽՆԴՐԲՐԸ՝ ԲԱՆԳՈՐՆԵՐԻ ՉԱՀԿԵՐԻ ԱՊԱՇՄԱՎԱՆՈւ-
ԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՐԱՆՑ ՆԱյութական ԳՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ, — ՎՈՐՈՇՈՒՅ Ի ԻՐ ԱՊԱՇՄԱ-
ԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵտեւյալ ՋՐՁԱՆԱԿԸ, ԳՈՐ-
ԾԱՐԿԱՆԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՆԵՐՆ ՀԵՏԵԿՈՒՅ ԵՆ,
ՎՈՐ ԻՐԱՎՈՐԾՎԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՊԱՇՄԱՎԱ-
ՆՈՒԹՅԱՆ և ԱԾՈՑԲԱԼԱԿԱՆ ԱՊԱՇՆՈՎԱԳՐՈՒ-
ԹՅԱՆ ԲՈՂՈՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ, ԳՈՐԾԱՐԿԱՆԱՅԻՆ
ԿՈՄԻՏԵՆ ՀԵՏԵԿՈՒՅ Ի, ՎՈՐ ԱՇԽԱՏԱՎԱՐԾԸ
ԺԱՄԱՆԱԿԻՆ ՎՃԱՐՋԻ և ԱՊԱՇՆՈՎԱԳՐԱԿԱՆ
ՄՈԿԱՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՄՈՒԾՎԵՆ, ԳՈՐԾԱ-
ՐԿԱՆԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՆ ԻՐ ՆԵՐԿԱՅԱԳՈՒՅԻՆՆԵՐՆ
և Ուզարկում գնահատուտարիֆային հանձ-
նաժողովներում, ԳՈՐԾԱՐԿԱՆԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՆ
ՀՈԳ և տանուտ աշխատանքի պայմանների,
ընակարանային պայմանների բարելավմա-
նը և այլն, գոնձարարունային կոմիտեն ձեռ-
նարկության մեջ կազմակերպում և կուտ-

կրթական աշխատանքը, տարածում և
ձեռք բերված զրականությունը, նպաս-
տում և անգրագիտության վերացնելուն և
այլն:

8. Արտադրության կազմակերպման
ասպարիզում, գործարանային կոմիտեն, շր-
խառնվելով վարչության կարգադրություն-
ների և գործողությունների մեջ և չըե-
կանելով նրա կարգադրությունները, գոր-
ծարանի վարչության հետ միասին, մաս-
նակցում և ձեռնարկության կյանքի ամե-
նակարևոր խնդիրների քննությանը (պե-
տական ձեռնարկություններում), նպաս-
տում և արտադրության նորմալ ընթաց-
քին. ընդհանուր, պատգամագորական և
համբարական ժաղովներում ու արտադրա-
կան խորհրդակցություններում կազմակեր-
պում և տնտեսական մարմինների գեկու-
ցումները. հավաքական պայմանագրի հի-
ման վրա մասնակցում և բանկորների և
ծառայողների վարձելուն և արձակելուն.
մասնակցում և տնտեսական մարմինների

(գործարանների վարչության) կազմելուն,
առաջարկելով իր թեկնածուները համապա-
տասիսան միության միջոցով ի քննություն
տնտեսական բարձր որգանների. մասնակ-
ցում և այն հետազոտութներին և վերըս-
տուկութներին, վոր կատարում են Բան-
ֆյուզ-Տեսչությունը և ուրիշները:

9. Կազմակերպչական խնդիրների աս-
պարիզում՝ գործարկումը (աեղկումը) ձեռ-
արկության բանվորներին և ծառայողնե-
րին քաշում և (գրավում) համապատաս-
խան կազմակերպության՝ արտադրական
միության շարքերը. վորոշ ձեռվորութն և
տալիս բանվորների և ծառայողների հեղա-
փոխական-դասակարգային գիտակցությա-
նը. անցկացնում և նրանց մեջ պրոլետա-
րական դիսցիպլինան. միության կողմից
հաստատված կարգով հետևում ե. վոր ան-
գամավճարները կանոնավոր գանձվին, միու-
թյան անունից հանգես և գալիս իրեն
ներկայացնեցի՛ գործարկումի առաջ դրված
խնդիրները կատարելու նպատակով:

բանվորների ընդհանուր ժողովներ, յեթե աշխատանքի պայմանները և շենքն այդ անելու հնարավորություն առաջիս են, իսկ մեծ գործարաններում ու զավողներում, ուր 2000-ից ավելի բանվորություն կա՝ հրավիրվում են պատգամավորական ժողովներ (15—25 մարդուց մեկ պատգամավոր): Ընդհանուր կամ պատգամավորական ժողովներում գործարկումն ընդհանուր քաղաքական ընույթ կրող հարցերի հետ միասին, դնում և և արձեստակցական, աշխատանքին, աշխատավարձին, կոռպերացիային, փոխադարձ ողնության վերաբերյալ հարցեր, նաև՝ միության անդամներին հետաքրքրող այլ հարցեր:

14. Տնտեսական շահերի պաշտպանության ասպարեզում, արհմիությունների նոր խնդիրները ամենից առաջ միությունից պահանջում են, վոր նա մոտենա բանվորական մասսաներին և նրանց գիտակցորեն զրավի միության կյանքի գործունեյության մեջ: Միության կյանքում ակտիվ

մասնակցություն ցույց տալը և մասսաներին այդ կյանքի մեջ քաշելն իրագործվում և կամավոր, անհատական անդամությամբ և միությունական մասսայական աշխատանքի այլ մեթոդներով (յեղանակներով):

15. Մասսաներին մոտենալու լավագույն մեթոդները նրանք են, վորոնք բանվորներին քաշում են միության ակտիվ կյանքի մեջ, ստիպում են նրանց հետաքրքրվել միությունական գործերով և զգացնել են տալիս, վոր միությունն անհրաժեշտ և բանվորների համար, վոր առանց նրան բանվորների տնտեսական շահերի պաշտպանությունն ու ձեռնարկության նորմալ աշխատանքն անհնարին է: Հենց այդ պատճառով ել ընդհանուր և պատգամավորական ժողովներում, ընդհանուր քաղաքական հարցերի հետ միասին, անհետեշտ և դնել նաև աշխատավարձի, կոռպերացիայի, հատագործի գնահատության, մշակման նորմերի, հավաքական

պայմանագրի և այլն հարցերը։ Վատ և
այն գործարկումը (տեղիումը), վորը կար-
ծում է, թե իր աշխատանքը միայն այն
պիտի լինի, վոր կարգի դնի իր գրասեն-
յակային ապարատը, ստորագրի թղթերն
ու իր և գործարանի վարչության մեջ լավ
փոխարարերություններ հաստատի։ Լավ
փոխարաբերություններ պես և հաստա-
տել գործարանի վարչության ու բանվոր-
ների միջեվ յեվ գործարկումի ու բանվո-
րակուն մասսայի միջեվ։ Դրա համար ընդ-
հանուր կամ պատզամավորական ժողովներ
պիտի հրավիրել վոչ միայն այն ժամանակ,
յերբ բանվորներից վորեւ հատկացումներ են
պահանջմում կամ յերբ գործարկումը վե-
րընտրվելու յեւ և պետք է իր աշխատանքի
մասին հաշիվ տա, — այլ գլխավորապես
այն ժամանակ, յերբ այս կամ այն հարցը
հուզում յեվ հետաքրքնում և բանվորներին
յեվ նրանք ցանկանում են այդ հարցը լր-
սել վոչ «ինքումացիոն» կարգով, այլ
բնության կարգով յեվ համապատասխան

թենց կամքի ու ցանկության գործեական
վեխու, լուծում տալու համար։

16. Գորպեսպի բանվորներն իմանան,
զգան, վոր միությունը հոգ և տանուց
իրենց կարիքների մասին, — նյութական և
հոգեոր, — գործարկումը պարտավոր և իր
հիմնական ուշագրությունը գարձնի, այս
պես կոչված «կենցաղի մանր-մունր» հար-
ցերին։ Դրանք բնավ «մանրունքներ» չեն
բառիս ճիշտ իմաստով, — դրանք բանվոր-
ների համար շատ կարևոր են։

Դործարանի վարչության միջոցով,
գործարկումը պետք է հոգա, վոր բանվոր-
ների բնակարանների վերանորոգութեանը
ժամանակին կատարվեն, վորպեսպի ապա-
կիները քցին, կտուրը կարկասվի, վառե-
լիքը բերվի, ջուրը բերվի և այլն։ Գործարկումը
պիտի ազգի գործարանի վարչության վրա,
վորպեսպի բաղնիքը տաքացվի, վորպեսպի
այնտեղ լինին թասեր ու դույլեր, վորպեսպի
կոռպերատիվում վաճառքը տեղի ունենա
բանվորների համար հարմար ժամանակում,

զորպեսզի այնտեղի ապրանքները արժան և ավելի լավ լինեն, քան շուկայում: Գործարկոմը (տեղկոմը) պետք և համաձայնության գու գործարանի վարչության հետ, ոռնիկի ժամանակին տալու մասին, ընդհանուր ժողովներում դնի ոռնիկի ձըգաձըգման և ուշացման հարցը և վոչ թե բավականանա միայն գործարանի վարչության խոստումներով, թե «փողն հենց գորյեկավ կտանք»:

17. Վոչ մի զեպքում գործարկոմը չպիտի փոխարինի տնտեսական մարմնին, փոխարինի բացակա դիրեկտորին, ստորագրի վարչական հրամանները (յերկու ստորագրությամբ՝ գործարկոմի նախագահի և դիրեկտորի), ոռնիկն այս կամ այն ժամանակ վճարելու համար՝ պարտավորություն չպիտի վերցնի, ոռնիկ տալը մերժի («կասում փող չկա, զնացին քաղաք բերելու և այլն»): Եռոյնիսկ այն հանդամանքը, զոր գործարկոմն ու զրասենյակի կամ դիրեկտորը միևնույն տեղումն են

դանվում, վատ և ազգում բանվորների հետ ունեցած փոխարաբերության վրա: Գործարկոմի տեղը գրասենյակից բաժան պիտի լինի:

18. Յերբեմն գործարկոմի նախագահը կամ միությունական այլ պատասխանատու աշխատողները ոգտվում են լավ բնակարանից, լուսավորությամբ, գործարանի վարչության մատուցած ծառայություններից, իրենց անձնական գործերի համար տեղ զնալիս՝ ձիով և այլն: Այդ բոլոր անպայման չպիտի լինեն վոչ միայն նրա համար, զոր այդ յերեսույթները բանվորների վրդովմունքն ու զայրույթն են շարժում, այլ և նրա համար, զոր նրա մատուցած այդ ծառայությունները վերջի և վերջո թեև աննկատելիորեն, ուզզակի պրոֆաշնատավորին յենթարկում են տնտեսավարական աշխատողին:

19. Գործարկոմի նախագահ և նրա անգամները իրենց ամբողջ կյանքով և շըջապատող պայմաններով բանվորներից

չպիտի ջոկնվեն: Նրանք պիտի լինեն բան-
վորների մէջ՝ հաճախեն նրանց ընակա-
րանները ու կողարմանները, պիտի իջնեն
աշխատանքի գտանդավոր և կեղտոտ փայ-
րերը և անսիջական ու անձնական շփու-
մով ու խոսակցությունից պարզեն մասուա-
ների տրամադրությունը տնտեսական որ-
դանի կամ միւռթյան անբավականությու-
նը կամ քաջալերությունը:

20. Գործարկումը (տեղկոմը) չպիտի
մոռանա և բանվորների հոգեկան պահանջ-
ները, պիտի կարգի դնի ակումբը, գրադա-
րանը, յերեկոյան պրոֆտեխնիքական կամ
հանրակրթական դասընթացքները, ստանա
թերթեր, անցնի գպրոց, ուր սովորում են
բանվորների գավակները, մանի անգրագի-
տության կայանները, ուր սովորում են
հասակագոր անդրագիտաները: Գործարկումն
ամեն տեղ պիտի լինի, ամեն ինչ իմանա,
ամեն բանին արձագանք տա և հարազատ
ու մատչելի լինի շարքային բանվորին:

21. Անհրաժեշտ և ուշադնություն

գործնել այն հանգամանքի վրա, վար գոր-
ծարկումն իր աշխատանքի ընթացքում հա-
ճախ խճողված և լինում գրադրությամբ,
վոր անմիջականորեն իր գործունելությու-
նը չի վիրարելում, զանազան հիմնարկու-
թյուններին տեղեկանքներ և տալիս բան-
վորների քանակի մասին, նրանց աշխա-
տավարձի մասին և այլն, տալիս և վկա-
յականներ ծննդյան և մահվան մասին,
խանութից վարկ բաց թողնելու մասին,
բնակարան ստանալու մասին և այլն: Հա-
ճախ զործարկումի նախագահը տասնյակնե-
րով նման թղթեր և ստորագրում (և
նույնիսկ կազմում), և այլևս ժամանակ չի
ունենում իր իսկական միւռթյունական
աշխատանքը կատարելու համար: Անհրա-
ժեշտ և դրան վերջ տալ, և բոլոր վկայա-
կանների ու տեղեկանքների տալը բարձել
գործարանի (հիմնարկի) վարչության գրա-
սենյակի վրա:

ՔՈՐԾԱՐԿՈՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ

22. Տնտեսական շահերի պաշտպանության ասպարիզում՝ արհեստակցական կազմակերպությունների ունեցած նոր խընդիրները դեռ ևս չեն նշանակում, թե պըրուինարբատը հրաժարվելու յի հանրապետության տնտեսավարական կազմակերպությունները զիկավարելուց Այդ զիկավարությունն իրագործվում է պետական պլանային հիմնարկությունների միջոցով, Արդյունաբերության վերականգնման հաջողությունը պահանջեց, վոր այդ ձևի առանձ կատարի ուժերի տեհնաշտ կենտրոնացում, լարվածություն և պատասխանափություն և վոր ամրադրված իրավունքը ու պատասխանատվությունը կենտրոնացվի գործարանային վարչության ձեռքին, այդ պատճառով ել գործարկումը անսիրջապես չի խառնվում ձեռնարկության կառավարելուն, բայց արտադրության վրա ազգում է գործարանային վարչության հետ արտադրական խորհրդակցու-

թյուններ գումարելով և հրավիրելով հատուկ զործարանային (պատգամավորական) արտադրական խորհրդակցություններ, վորտեղ գործարանի վարչությունը զեկուցում է իր աշխատանքների մասին:

23. Այդ զեկավարությունը իրագործվում է նույնպես նրանով, վոր գործարկումը զանազան տնտեսավարական և վարչական պաշտոնների համար առաջարկում է իր թեկնածուներին, ինչպես նաև նախապես ծանոթանում է հիշյալ ձեռնարկության ֆինանսական և տնտեսական դըրության հետ և յերեան հանուն նրա տընտեսական հնարավորությունները հավաքական պայմանագիր կնքելու նպատակով,

24. Բացի գրանից, գործարկումը, պարհանագային հիմունքներով (ներկայացուցիչներ գործարկումից և գործարանային վարչությունից) կազմաձ զնահատուկոնֆլիկտային հանձնաժողովների միջոցով մասնակցում է կոնֆլիկտների լուծելուն, նույնպես Բանվորագյուղացիական Տեսչության-

կատարած հետազոտություններին ու վերըստուգումներին (աելիդիաներին) ժամանակցելու միջոցով:

25. Մատնանշված աշխատանքները կատարելու համար, գործարկումն (տեղկումը) իրավունք ունի տնտեսավարական որգաններից ստանալու բոլոր անհրաժեշտ տեղեկանքներն ու տեղեկությունները, ըստ վորում տնտեսավարական որգանները չպետք է մեջ ըերեն «գաղտնիքներ» ու «տուերական գաղտնիքներ» և այդ պատճառաբանությամբ հրաժարվեն միություններին անհրաժեշտ տեղեկությունները տալ:

26. Բանվորների կենցաղին և աշխատանքին վերաբերող բոլոր հարցերը գործարկումը (տեղկումը) լուծում է բացառապես ճիմք ունենալով այն հավաքական պայմանագիրը, վոր կնքել են տնտեսական մարմինն ու արհեստակացական միությունը: Գործարկումն, իհարկե, իր ընթացիք աշխատանքի ժամանակ և մանավանդ հավաքական պայմանագիր կնքելիս ու կյանքի մեջ

կիրառելիս, իրեն նպատակ պիտի գնի վոչ միայն բանվորների տնտեսական շահերի պաշտպանությունը, այլ նաև նպաստելու յեպիտության, բարձրացնելու յերկրի արտադրական ու յժերը ընդհանրապես և իր ծեռնարկությանը մասնավորապես, ի նկատի ունենալով, վոր աշխատանքի ուրագողականության այդ ընդհանուր բարձրացումը բարելավելու յենակ տվյալ ձեռնարկության բանվորների գրությունը:

27. Այս գեղքում, յերբ գործարկումը տեսնում է, վոր յենթադրված արագրական ծրագրում կան պարզապես աննպատականարմար միջոցներ, վոր արտադրությանը վնասելու յեն, նա այդ մասին տեղեկացնում է իր միությանը, առանց խառնվելու գործարանային վարչության կարգադրություններին:

28. բանվորների արտադրական գառտիարակության ասպարիդում, գործարկումները առանձին և հատուկ աշխատանք են տալու. այդ նոպատակով նբանք մասնակ-

ցում են բանվորներին արտադրական խոր-
նըրդակցությունների համար նախապատ-
րաստելու աշխատանքներին, վորակեղ գոր-
ծարանի վարչությունը գեկուցում ե տվյալ
ձեռնարկության գրության մասին։ Այդ
խորհրդակցություններում բանվորները
հանդես են գալիս աղմինիստրացիային քա-
ջալերելով կամ հանդիմանելով և ցույց են
տալիս պակասությունները և միջոցներ են
առաջարկում նրանց ուղղելու համար։

Տնտեսական աշխատանքներին միու-
թյան մասնակցության ձևերի մասին խո-
սում ե Հ. Ա. Մ. Կ. Խ. .ի և Փ. Տ. Գ. Խ. .ի
ըջարերականը, վոր ստորագրված ե ընկ.
Տօնմակույն Եվ Ռիկովի կողմից (տպված և
«Խորհրդագյին Հայտատանում»)։

29. Արհմիությունների Վ Համագու-
մարը ցույց տվեց, թե գործարկոմի աշխա-
տավորներին և թե տնտեսավարներին, վոր
նրանց նպատակն ըստ եյության մի բանի
յե հանդում՝ սոցիալիստական տնտեսության
կաղմակերպման, իսկ այդ նպատակին կա-

րելի յե հասնել միայն պլրոֆեսիոնալիստ-
ների և տնտեսավարների ընկերական շաղ-
կապմամբ, վորովհետեւ այդ շաղկապն ու
միացումը կարող է ծառայել իրեն գրավա-
կան նոր անտեսական քաղաքականության
ծննության գիշտիչ կազմերի գեմ մոված պայ-
քարի հաջողության և պահպանել թե մե-
կին և թե մյուսին վասակար թեքութեա-
րից։

30. Ներկա մոմենտում, յերբ միու-
թյունների կապը բանվորների հետ ուժե-
ղացել ու ամրացել է, յերբ ժողովրդական
տնտեսության ընդհանուր բարեկավման հետ՝
պրոլետարիատի ընդհանուր բարեկեցու-
թյունն ել բարձրացել է, — արհեստակցա-
կան միություններն ավելի ճիշտ կերպով
պարզում են իրենց վերաբերմունքը գեպի
արդյունաբերություն և ի գեսա միությու-
նական ստորին մարմիններում ունեցած
իր ներկայացուցիչների, ուզում են արտա-
դրության իսկական տերը լինել։ Տեր լինել
ասելով, չպետք ե հասկանալ, թե պիտի

ձգոտել իրենց ձեռքն հավաքել արտազրությունն ու նրա կառավարելը, այլ պիտի ձգտել ինչ կերպ ել լինի, ձեռք բերել այնպիսի դրություն, վոր մեր զիրեքտորները, կառավարիչները, տրեստներն ու սինդիկոտները, ի նկատի առնելով վոչ թե իրենց անձնական շահը, այլ բանվոր դասակարգի շահը, այնպիս վերաբերվելին արտազրությանը, ինչպիս վերաբերվում եր նախկին խնայող տերը, խնայելին ամեն մի կոպեկը, գնահատելին ժամանակի ամեն մի բոպեն, որ ու զիշեր հոգային արտադրության կարիքների մասին, ամեն մի անհաջրզության համար հոգով ցավելին, իրենց յենթակա մարդկանցից ամեն ինչի համար խստագույն կերպով պահանջկոտ լինելին, բայց իրենք ևս ամեն մի փնթի ու անուշադիր, թափթփված վերաբերմունքի համար բարոյական և նյութական խիստ պատասխանատվություն կրելին:

Միայն այդպիսի աղմինիստրատորներին, վորոնք արդյունաբերությունը սի-

բուժ և գոտքի յեն կանգնեցնում, ոլրոլետարիատը պետք և հարգի և սիրի, և ամեն կերպ պահպանի ու ոգնի նրանց աշխատանքին, վորովհետեւ հակառակ պարագային մեր ձեռնարկությունները, նույնիսկ բավականաչափ միջոցներ ունենալու, տեխնիքական ուժերով լիովին ապահովված լինելու և բանվորների աշխատանքի նորմալ արտադրողականության ղեղքում, բայց փքված, ուռած շտատներով ու աննորմալ վերադիր ծախսերով, այնուամենայնիվ վնաս կտան, այն ինչ կապիտալիստական տնտեսության պայմաններում նրանք ոգութ կրերելին:

Արհեստական միություններն այժմս արդեն լիովին ըմբռնում են, վոր առանց անհրաժեշտ շահ կուտակելու պըռ լիտարիատը չի կարող իր ձեռքում պահել գյուղացիության քաղաքական ղեկավարությունը և չի կարող անցնել սոցիալիզմին:

31. Արտադրության ռացիոնալ կազ-

մակերպության և գործը տնտեսավարական հիմքերի վրա դնելու նպատակով, գործարկումը հետեւում է, վոր հնարավոր լինի կրծատել տեխնիքական ապարատը, պրոդուկցիան վորակով բարձրանա և արտադրության վերադիր ծախսերն ել առավելագույն չափով (մաքսիմալ) կրծառվեն։ Արտադրության վերադիր ծախսերի մաքսիմալ կրծառածան խնդիրը առանձնապես պատասխանատու և հրամայողական նշանակություն ունի ներկայումս, վորոնետեւ վերադիր ծախսերի ամեն մի իջեցում, նվազեցնում և պրոդուկցիայի ինքնարժեքը և նպաստում նրա լայն տարածման թի քաղաքում և թի մասնավանդ գյուղում («գյուղի և քաղաքի շաղկապումը», — «մկրատի պրոդեման» և այլն)։ Վերադիր ծախսերի հաջող կրծառումը նըպաստելու յե նույնպես բանվորների վարձարարման հետագա բարձրացմանը և նրանց վարձատրությունը նախապատերազմականին մոտեցնելուն. արդյունաբերության մի քանի ճյուղեր ներկայումս արդեն այդ նա-

խապատերազմական վարձատրություն ունեն։

ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ՅԵՎ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ

32. Գործարանային կոմիտեյի գործնական կարեռագույն աշխատանքներից մեկն այն է, վոր նախապատրաստական աշխատանք և տանելու միության և ձեռնարկության միջև հավաքական պայմանագիր կնքելու համար։ Այդ նախապատրաստական աշխատանքը տնտեսական մարմնի հետ պարզելու յե ինչպես աշխատավարձի ավելացման հարցը, այնպես ել տվյալ ձեռնարկության առանձնահատկությունները ու նրա մեջ աշխատելու պայմանները։ Հավաքական պայմանագրի մեջ այս կետերը պիտի նախատեսնել այն նորմաներից դուրս, վոր արդեն Աշխատանքի որենսագրքում նախատեսնված են, ինչպես որի՞նակ արձակուրդի յերկարացնելը, յերկարամյա աշխատանքի կամ արտադրության վը-

նասակարության հետևանքով, լրացուցիչ չեղոքացնող նյութերի, արտադրական և մասնագիտական հագուստի տալը և այլն:

33. Գործարանային կոմիտեն համբարությունների և բաժանմունքների ներկայացուցիչների հետ հավաքական պայմանագրերը նախորոք քննում և պատգամավորական ժողովում և ապա բանվորների ընդհանուր ժողովում:

34. Հավաքական պայմանագիրը կը նքելիս՝ ամենահիմնական մոմենտը աշխատավարձի հարցն ե և գործարանային կոմիտեյի խնդիրն այն ե, վոր նա հաշվի առնելով ձեռնարկության միջոցները (ռեսուրսները), վորոշի նրա չափն այնպես, վորայդ աշխատավարձը հնարավոր յերաշխիքներ տա բանվորերի նորմալ գոյության համար, բայց և միաժամանակ չքանդի ձեռնարկության տնտեսական կարողության (հզորությունը) հիմքերը:

35. Բանվորների և գործարանի վարչության միջև կոնֆլիկտ առաջանալու դեպ-

քում, գործարանային կոմիտեն պարտավոր ե միջոցներ ձեռք առնել նրանց վերացնելու համար և կովկի սուր, ծայրահեղ մեթոդների, ինչպես որինակ գործադուլին ե, դիմելու յե բացառիկ դեպքերում միայն:

Գործադուլին իրեկ կովկի մեթոդ, յեղանակ, նույնիսկ մասնավոր ձեռնարկներում գործադրվելու յե շատ մեծ զգուշությամբ և ընդհանուր հասարակական պայմանների գասավորությունը խիստ հաշվի առնելուց հետո, վորովհետև չպետք ե մոռանալ, վոր մասնավոր ձեռնարկատերերի դեմ կազմակերպած գործադուլը նախ և առաջ հարգածում ե հենց իրենց միության անդամներին, և բացի զրանից յերկար տևած, ձգձգված գործադուլը թուլացնում ե մասնավոր արտադրության զարգացումը, վորով ներկա մոմենտում պրոլետարիատն իրեկ զասակարգ դեռ ևս շահագրգոված ե: Առավել ևս պետական ձեռնարկություններում գործադուլը կհարգածի բանվոր դասակարգին ամբողջությամբ, ուստի պետական ձեռնար-

կություններում գործադուլն իբրև կանոն, անթույլատրելի յե. 1) յեթե գործադուլը ծագում է տարերային կերպով, ապա արհեստակցական միությունները պետք է բոլոր միջոցները ձեռք առնեն այն վերջացնելու համար և հոգան, վոր այնուհետեւ բանվորներից չկտրվեն, չհեռանան և տեղյակ լինեն նրանց ցանկություններին և տրամադրություններին:

ԱՇԽԱՏԱՎԱՐՁ.

36. Ըսկնող խորհրդային վալյուտայի պայմաններում, աշխատավարձի հաշվումը, վորոշումը կառուցվում եր այսպիս կոչված ապրանքային ոռւբլու վրա: Դա նշանակում եր, վոր աշխատավարձն հաշվելու ամուր և կայուն միավոր հաստատելու համար, մի ժամանակում, վոր բանվորին յերաշխավորեր շռւ-

1) Պետական ձեռնարկություններում գործադուլ կարելի յե թույլ տալ բացառիկ գերքերում՝ միմիայն միությունական բարձր մարմինների թույլտվությամբ:

րայի գների խիստ տատանումներից և նըկան հնարավորություն տար իր աշխատավարձն ավելի պարզ և հեշտ ձեռվ համեմատել նախապատերազմյան աշխատավարձի հետ, — այդ աշխատավարձը պիտի կառուցվեր մթերքների հավաքածուի բյուջետային արժեքի (հաշված խորհրդային դրամանիշներով) և նախապատերազմյան ոռւբլիներով հաշված՝ նույն քանակությամբ մթերքների համեմատության վրա: Նման հավաքածուի արժեքը, նախապատերազմյան ապրանքային ոռւբլսվ, վորոշվում եր խորհրդային դրամանիշներով արտահայտված այդ արժեքը ամեն ոի ամսի 1-ին և 15-ին, բաժանվում եր նույն այդ մթերքների նախապատերազմյան ժամանակվա արժեքի վրա: Որինակ, 1923 թ. մայիսի 1-ին Մոսկվայում սթերքների մի վորոշ հավաքածու (բյուջետային ինդեքս) 1923 թ. դրամանիշներով, Մոսկվայի Խորհրդի Աշխատանքի բաժնի կողմից վորոշվում եր 596 ռ. 95 կ., այսինչ նույն սթերքները պատե-

բազմից առաջ տրժելին 10 ս. (մթերքների հավաքածուն վերցվում ե բանվորական ցանցի 1-ին կարգի համար), բաժանելով 596 և. 95 կոպեկը 10 ս. վրա, կստանանք 59 ս. 70 կ., վորն և ցույց ե տալիս ապրանքային սուբլու արժեքը 1923 թ. զբաժանիչներով: Յեթե բանվորը 1-ին կարգով ուներ 10 ապրանքային սուբլու դրույք, իսկ 9-րդ կարգով 25 ապրանքային ս. ապա դա արտահայտվում եր այս կերպ 59 ս. 70 կ. բազմապատկված 25 ապրանքային սուբլով, այսինքն 1492 ս. 50 կ.:

ԿԱՅՈՒՆ ՎԱԼՅՈՒՏԱՅԻՆ ԱՆՑՆԵԼԸ

37. Ներկայումս խորհրդային գրամանիշներից կայուն վալյուտային անցնելով, այլևս կարիք չկա աշխատավարձը ապրանքային սուբլով հաշվելու, և միությունները իրենց հավաքական պայմանագիրը վերակնքում են հաշվելով աշխատավարձը 1-ին կարգի համար չերփոնյան հաշվով:

38. Ներկայումս մեր տնտեսության

առողջացման պատճառով, մենք անցնում ենք կայուն վալյուտայի, ապրանքային սուբլու փոխարեն վերցնում ենք հասարակ չերպոնյան սուբլին և աշխատավարձը հաշվում կայուն սուբլիներով, նրա միջին չափը վորոշելով այն ռեալ աշխատավարձից, վորքանվորներն ստանում եյին նախքան կայուն վալյուտան կիրառելու, Բարձրացնել ռեալ աշխատավարձը նախկինի համեմատությամբ, քանի զեռ դրամական ռեֆորմը հաստատուն հիմքերի վրա չի դրվել, — ներկայումս անհնարին ե, վորովհետեւ դա կարող եր միայն քանդել դրամական ռեֆորմը և մեզ վերադարձնել ապրանքների ավելի վատթար և անկայուն դներին:

Ներկայումս ամբողջ խնդիրն այն ե, վոր պահպանենք նախկին ռեալ աշխատավարձը, վորովհետև այդ պայմանով բանվոր դասակարգն արդեն բավականին շահում ե (կայուն վալյուտան կիրառելով):

39. Ամենից առաջ բանվորներին պիտի բացատրել, վոր այդ ռեֆորմից շահվում

և խորհրդային պետությունը, վորովհետմանիայն կայուն վալյուտայի ժամանակ, ժողովրդական տնտեսությունը կարող է լիովին առողջանալ, կնշանակի և կարող է հընարավորություն ստեղծվել բանվորների աշխատավարձի հետագա բարձրացման համար։ Յերկրորդ, բանվորն հենց հիմա յելշահում և ուժքորմից, վորովինետև նա թըղթադրամի ընկնելուց այլևս չի կորցնում։ առաջիկա նման, յերբ նա վարձն ստաւնում եր և միանգամից ուհալիզացիայի յենթարկել չեր կարողանում, բացի դրանից կուրսի ընկնելուց աշխատավարձն ստանալիս չի կորցնում առաջիկա պես, յերբ աշխատավարձը շարաթներով ուշացվում երտնտեսական մարմինների կովմից և վոչընչով չեր ապահովում։ Յերրորդ, բանվորը շահում եւ ապրանքների և մթերքների ափելի կայուն գների պատճառով, քանի վորընկնող վալյուտայի ժամանակ, ամեն մի առևտրական իրեն «ապահովագրում» եր՝ կամայականորեն ամեն որ ապրանքների, գները բարձրացնելով 10-15^{0/0} ով։

40. Դրամական շրջանառության ռեֆորման, խորհրդային դրամանիշները փոխելով կայուն արծաթե վալյուտայի, միանգամից ազատում ե գները կամայական բարձրացումներից և ապահովում աշխատավարձը կուրսի մեջ կորցնելուց։

41. Այս բոլոր, ինարկե, լրիվ արդյունք կտա միայն այն դեպքում, յեթե ռեֆորման բարեհաջող ընթացք կունենա (իսկ նա բարեհաջող կերպով է ընթանում) և մթերքների գները խիստ կերպով չեն աճի. այդ պատճառով միությունների նըպատակն, ընդհանրապես, և մասնավորապես գործարկումներինը այն և լինելու, վորամեն կերպ նպաստեն այդ ուժքորմի ամրացմանը և կյանքի մեջ կերպառելուն։

42. Կայուն վալյուտային նորմալ կերպով անցնելու ժամանակ՝ միությունները ապրանքային ոռւբլին կամ, ավելի ճիշտ, բյուջեատային հավաքածուի արժեքը գործադրելու յեն ուհալ աշխատավարձի պահպանումը սառւգելու համար. յեթե բանից

դուրս գա, վոր, չնայած ռեֆորմի կիրառելունը՝ մի քանի ամիս հետո, վորևե ապրանքի գինը բարձրանա (իսկ այդ հնարավոր ե, վորովնետու նույնիսկ կապիտալիստական յերկը ներում, վոր լիովին կայուն վալյուտա ունին, ապրանքների գները միշտ բարձրանում են), ապա միությունները պետք են հավաքական պայմանագրերը վերակնքին և յելակետ ունենալով բյուջետային հավաքածուն, Լին կարգի համար չերփոնյան հաշվով նոր գրույք վորոշեն:

43. Ապրանքայինից չերփոնյան հաշվին անցնելու ամենամեծ դժվարությունը հենց հիմա գոյություն ունի, ռեֆորմի առաջին ամիսներին։ Հետագայում հավաքական պայմանագրերում վորոշված աշխատավարձը ժամանակ առ ժամանակ վերաքննվելու յե (մոտավորապես 3-4 ամիսը մի անգամ), նայած մեր ժողովրդական անտեսության ընդհանուր կոնյուկտուրային (ընդհանուր դրության):

44. Հետագայում, 3-4 ամսվա համար,

հավաքական պայմանագիր կնքելու ժամանակ, տեղ չպիտի ունենա նաև այսպես կոչված «թանգության համար հավելումը», քանի վոր այդ հավելումը նախորոք յենթադրում ե, վոր կայուն արծաթե վալյուտան ել անընդհատ ընկնելու յե, մի բան, վոր ի հարկի իսկապես չի լինելու։
ԹՆԱՀԱՏՈՒ-ԿՈՆՖԼԻԿՏԱՅԻՆ ՀԱՆՉՆԱԺՈՒՄՈՒ

ԴԱՎ

(Գ. Կ. Հ.)

45. Ամեն մի հավաքական պայմանագիր և տարիքային համաձայնություն ինչը քան ել վոր լավը լինի. ելի վերահսկողության կարիք ե զգում արհեստակցական կազմակերպության կողմից ու պիտի լինի մեկը, վոր վերահսկի այդ պայմանագիրն ու համաձայնությունը կյանքի մեջ կիրառելու համար։ Այդ վերահսկողությունը գոծարկարկումներն իրականացնում են գնահատու կոնֆլիկտային հանձնաժողովների միջոցով, վոր կազմակերպվում են պարի—

42

տեսային հիմունքներով տվյալ հիմնարկության կամ ձեռնարկության և արհեստակցական միությունների ներկայացուցիչներից:

46. Գնահատու-կոնֆլիկտային հանձնաժողովները կազմակերպվում են վոչ միայն հավաքական պայմանագրերն ու տարրիֆային համաձայնությունները կյանքում կիրառելու համար, այլև լուծելու համար ամեն տեսակի վեճեր և կոնֆլիկտներ, վործագում են հավաքական պայմանագրերը վործադրելիս: Այդ պատճառով գնահատու-կոնֆլիկտային հանձնաժողովներն յերկու տեսակի փունկցիաներ ունեն՝ մշտական և ժամանակավոր: Նրա մշտական փունկցաներից են՝ հավաքական պայմանագրերի և տարրիֆային համաձայնության համաձայն արտադրականության նորմերի և կատարված գնահատության քննությունն ու հաստատումը, առանձին աշխատանքների և արհեստների համար փորձ և ստուգումն հաստատելը և արձակուրդների հերթականու-

թյան կարգը հաստատելը: Նրա ժամանակավոր փունկցիաներին վերաբերում են՝ կոնֆլիկտաներ լուծելը, ներքին կարգապահության կանոնների մշակումը և աշխատանքներն ըստ կարգերի բաշխելը: *)

47. Ներքին կարգ ու կանոնի բոլոր հարցերը գնահատու-կոնֆլիկտային հանձնաժողովը լուծում է բացառապես կողմերի համաձայնությամբ: Համաձայնությանը գալուց հետո, այդ վճիռը համարվում է վերջնական և պարտադիր յերկու կողմերի համար: Յեթև համաձայնություն չի կայա-

*) Գործարկումը չպիտի մոռանա, վրբ Գ. Կ. Հ.-ի վորոշումները գործարկումի կողմից չեն հաստատվում, ուստի նախ զործարկոմն, իբրև ներկայացուցիչներ Գ. Կ. Հ.-ի մեջ, ուղարկում է առավել ամուր և պատասխանատու ընկերների, և յերկրորդ քոլոր կարեոր հարցերի վերաբերյալ գործարկոմն իր ներկայացուցիչներին պետք է տա համապատասխան դիրեկտիվներ ու ցուցմունքներ:

ցել, ապա գործարկումը այդ կոնֆլիկտը հանձնում է միության, վորը կամ կարող է համաձայնության գալ բարձր կանգնած տընտեսական մարմնի հետ, կամ կոնֆլիկտը հանձնում է Աշխատողկոմին կից հաշտարարատայանը կամ միջնորդ գատարան։ Միջնորդ գատարանի կազմի մեջ մտնում են յերկու կողմից ել հավասար քանակությամբ ներկայացուցիչներ և միջնորդ դատարանինախագահն, ընտրված կողմերի համաձայնությամբ։

48. Առանձնապես սուբ բնույթ կրող կոնֆլիկտի ժամանակ, յերբ այդ շոշափումն ե պետական արդյունաբերության կարեռուագույն ճյուղերը, պիտությունն իրավունքունի նշանակելու միջնորդ գատարան կողմերի ներկայացուցիչներից նույնիսկ այն գեղքում, յեթե վիճող կողմից մեկն այդ չցանկանաւ։ Այս գեղքում դատարանին նշանակվում է Աշխատանքի գովակական կոմիտարիատի կողմից։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՏՊԵԱՆՈՒԹՅՈՒՆ

